



Զորայր Վիսլայի Սարգսյանը ծնվել է 1981 թվականի մայիսի 14-ին Գյումրի քաղաքում:

2004թ.-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտի «Ֆինանսներ և վարկ» ֆակուլտետը, ստացել է տնտեսագետի որակավորում:

1999-2001թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում:

Մասնակցել է որակավորման մի շարք դասընթացների. 2020թ. Chartered Management Institute-ի կողմից ստացել է «Կառավարում և առաջնորդություն» ոլորտում CMI 5-րդ մակարդակի որակավորում:

2005թ.-ից Զորայր Սարգսյանն աշխատել է Ակբա բանկում. 2005-2008թթ. որպես վարկային գործակալ, 2008-2010թթ. որպես ավագ վարկային գործակալ, 2010թ.-ին գլխավոր վարկային գործակալ, 2010-2014թթ. Առևտրային վարկերի բաժնի գլխավոր մասնագետ, 2014-2018թթ. Վարկային վերլուծությունների և կոմիտեների հաստատման բաժնի պետ, 2018-2025թթ. որպես Վարկային վերլուծությունների վարչության պետ:

2025թ. մարտի 3-ից նշանակվել է Ռիսկերի կառավարման տնօրեն:

Ամուսնացած է, ունի երկու որդի, մեկ դուստր: